

ՀՀ առողջապահության նախարար Արսեն Թորոսյանը աշխատանքային հանդիպումներ է ունեցել Արագածոտնի բուժհաստատություններում
22.08.2018

ՀՀ առողջապահության նախարար Արսեն Թորոսյանը եւ Արագածոտնի մարզպետ Աշոտ Սիմոնյանն այսօր մի շարք աշխատանքային հանդիպումներ են ունեցել Արագածոտնի մարզի բուժհաստատություններում: Մասնավորապես այցելություն է կատարվել «Աշտարակի բժշկական կենտրոն», «Ապարանի բժշկական կենտրոն», «Թալինի բժշկական կենտրոն», «Ծաղկահովիտի բժշկական կենտրոն», «Արտենիի առողջության կենտրոն» ՓԲԸ-ներ եւ «Արագածի առողջության կենտրոն» ՀՈԱԿ:

Շրջայց կատարելով բժշկական հաստատությունների մասնաշենքերով, հիվանդասենյակներով, ծանոթանալով բաժանմունքներում առկա խնդիրներին՝ քննարկվել են բժշկական կենտրոնների վերազինման եւ վերանորոգման իրականացման համար անհրաժեշտ միջոցների ներգրավման հնարավորությունները: Առաջնահերթ նախատեսվում է Թալինի բժշկական կենտրոնի պատուհանները փոխարինել նորերով եւ վերանորոգել ծննդօգնության բաժանմունքը:

Մյուս բժշկական կենտրոններում առկա հրատապ լուծում պահանջող խնդիրները հաշվառվել են եւ կլուծվեն առաջիկայում: